

Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից Երևանի «Ջրնուղ-Կոյուղի» ՓԲԸ-ում 2005թ. հուլիս-օգոստոս ամիսներին իրականացված մոնիթորինգի ընթացքում խմելու ջրի մատակարարմանը ներկայացվող սպասարկման որակի նվազագույն պահանջների ապահովման գործում տեղ գտած թերությունների վերացման միջոցառումների ծրագիր

1.Երևանի «Ջրնուղ-Կոյուղի» ՓԲԸ համակարգի հոսակորուստների կրճատման միջոցառումներ`

-ապահովել մասնաճյուղերում տեղադրված հոսքաչափերի աշխատանքային վիճակը և դրանց անխափան աշխատանքը (պատ. մասնաճյուղերի գլխ. ճարտարագետներ).

- ներկայացնել եռամսյա կտրվածքով (ըստ ամիսների) ջրապահանջի հիմնավորված կանխատեսումները (պատ. մասնաճյուղերի գլխ. ճարտարագետներ).

-յուրաքանչյուր ամսվա վերջին մասնաճյուղերի հետ համատեղ կազմել և ստորագրել մասնաճյուղերի կողմից ստացված ջրաքանակների փոխադարձ ակտեր և ներկայացնել ամփոփ վերլուծական տեղեկանք (պատ. ԵՏԿ ՓԲԸ ջրամատ. հաշվառման և զարգ. բաժնի պետ – մասնաճյուղերի տնօրեններ).

-մասնաճյուղերի ստացած ջրաքանակները հստակեցնելու նպատակով ավարտել միջմասնաճյուղային ջրամատակարարման ցանցի հատվող կետերում ջրաչափերի տեղադրման կամ խողովակների անջատման աշխատանքները: Միջոցներ չձեռնարկելու դեպքում սահմանային մասնաճյուղին տրված և չհաշվառված ջրաքանակը կդիտարկվի որպես տվյալ մասնաճյուղի կորստի ցուցանիշ (պատ. մասնաճյուղերի գլխ. ճարտարագետներ).

-կատարել հաստատված հաշվարկային նորմերով ջրամատակարարման համակարգի ջրածախսի հաշվառում ըստ ստորև բերված գործողությունների`

- խողովակաշարերի վնասում
- նորակառույց խողովակաշարերի վնասում
- օրվա կարգավորիչ ջրամբարների վնասում
- ջրօգտագործում հակահրդեհային նպատակով
- ցայտաղբյուրների մատակարարված ջրաքանակ

-ջրագծերի վթարների արագ արձագանքման և վերացման աշխատանքների կանոնակարգման նպատակով ընկերության 25.08.2005թ. N112 և 31.10.2005թ. N136 հրամաններիի պահանջներով նախատեսված վթարների մասին տեղեկատվության և գրանցամատյանների վարման և հաղորդագրությունների ապահովում (պատ. մասնաճյուղերի տնօրեններ, գլխավոր ճարտարագետներ):

2.Ջրամատակարարման գրաֆիկների և դրանց փոփոխությունների, ինչպես նաև ջրի որակի մասին բնակչությանը իրազեկման և այդ կապակցությամբ նվազագույն պահանջների կատարումը ապահովող միջոցառումներ.

-ընկերության մանուլի գրասենյակը ՁԼՍ-ներով սպառողներին պարբերաբար իրազեկում է մայրաքաղաքի ջրամատակարարման հաստատված գրաֆիկները ըստ համայնքների, իսկ Ընկերության մասնաճյուղերը՝ ըստ սպասարկման տարածքների՝ հնարավորինս մանրակրկիտ և հանրամատչելի /փողոցներ, թաղամասեր և այլն/: Համապատասխան տեղեկատվությունը ի տես բոլորի փակցվում է մասնաճյուղերում, տեղամասերում, թաղապետարաններում, համատիրություններում, այլ մարդաշատ վայրերում.

-ընկերության մասնաճյուղերը սպառողներին տրամադրում են՝ բազմաբնակարան շենքերի մուտքերում, Հայփոստի, Հայխնայբանկի բաժանմունքներում, այլ մարդաշատ վայրերում տպագիր նյութեր փակցնելու, համատիրություններին իրազեկելու և մեներգների կողմից բաժանորդների շրջանում անվճար տարածվող տեղեկատվական նյութերի միջոցով վթարային ծառայության, ինչպես նաև տվյալ տարածքը սպասարկող տեղամասի հեռախոսահամարները՝ ահազանգերի, բողոքների, հարցադրումների, այդ թվում՝ ջրի որակի մասին տեղեկություններ ստանալու կամ հաղորդելու համար: Ընդ որում, ստացված տեղեկատվությունը մասնաճյուղում պարտադիր կարգով գրանցվում է հատուկ մատյանում.

-պլանային կամ հրատապ աշխատանքների իրականացման գրաֆիկը, որը կարող է պատճառ հանդիսանալ ջրամատակարարման լրիվ կամ մասնակի դադարեցման կամ ջրամատակարարման հաստատված գրաֆիկի խախտման, ընկերության մասնաճյուղերը նախապես համաձայնեցնում են ընկերության գլխավոր տնօրենի, արտադրատեխնիկական և զարգացման հարցերով տնօրենի կամ այլ լիազորված անձանց հետ.

-պլանային կամ հրատապ աշխատանքներ իրականացնելու պատճառով ջրամատակարարումը լրիվ կամ մասնակի դադարեցնելու կամ ջրամատակարարման հաստատված գրաֆիկը խախտելու դեպքում ընկերության մասնաճյուղերը աշխատանքները սկսելուց 2 օր առաջ տվյալ տարածքի սպառողներին տեղեկացնում են՝ բազմաբնակարան շենքերի մուտքերում, Հայփոստի, Հայխնայբանկի բաժանմունքներում, այլ մարդաշատ վայրերում տպագիր նյութեր փակցնելու, իսկ թաղապետարաններին և համատիրություններին՝ հեռախոսագրերի միջոցով աշխատանքների կատարման և ջրամատակարարումը վերսկսելու կանխատեսվող ժամկետի մասին, որը չպետք է գերազանցի վերջին ջրամատակարարումից հետո 24 ժամը.

-վթարների դեպքում ընկերության մասնաճյուղերը՝ Ընկերության կենտրոնական գրասենյակի տեղեկատվության բաժնին և համապատասխան ծառայությունների ղեկավարներին գործող կարգի համաձայն իրազեկելուց հետո տվյալ տարածքի սպառողներին տեղեկացնում են՝ բազմաբնակարան շենքերի մուտքերում, Հայփոստի, Հայխնայբանկի բաժանմունքներում, այլ մարդաշատ վայրերում տպագիր նյութեր փակցնելու, իսկ թաղապետարաններին և համատիրություններին՝ հեռախոսագրերի միջոցով վերականգնողական աշխատանքների կատարման և ջրամատակարարումը վերսկսելու կանխատեսվող ժամկետի մասին, որը չպետք է գերազանցի վերջին ջրամատակարարումից հետո 36 ժամը.

-պլանային կամ հրատապ, ինչպես նաև վթարների վերացման աշխատանքները իրականացնելիս ջրազրկված տարացքներում ջրամատակարարումը համապատասխանաբար 24 և 36 - ժամվա ընթացքում վերսկսելու մասին պահանջները չկատարելու դեպքում ընկերության մասնաճյուղերը ջրազրկված տարածքների սպառողներին անվճար ապահովում են խմելու ջրով՝ այդ նպատակների համար հատկացված ջրատար մեքենաներով, նախապես հայտ ներկայացնելով ջրատար մեքենայի տրամադրման ժամկետների մասին.

-ջրազրկված տարածքների սպառողներին անվճար խմելու ջրով ապահովելու մասին պահանջները չկատարելու դեպքում, ըստ ջրամատակարարման և ջրահեռացման կանոնների 46.1 կետով ահանված կարգով, ընկերության մասնաճյուղերը սպառողների տվյալ անսվա վճարման ենթակա գումարը նվազեցնում են թերմատակարարված ջրի արժեքի քառապատիկի չափով՝ նախորդ 3 ամսվա միջին օրական ծախսի և թերմատակարարված օրերի արտադրյալով, այդ մասին բաժանորդի պահանջով կազմված ակտի հիման վրա, բաժանորդային քարտի վերահաշվարկի սյունյակում համապատասխան գումարային նվազեցում կատարելով.

-ջրի որակը ներկայացվող հիգիենիկ պահանջներին չհամապատասխանելու մասին ընկերության մասնաճյուղերը ընկերության գլխավոր տնօրենին, արտադրատեխնիկական և զարգացման հարցերով տնօրենին, տեղեկատվության բաժնին, համապատասխան ծառայությունների ղեկավարներին, իրավասու պետական մարմիններին գործող կարգի համաձայն իրազեկելուց հետո ձեռնարկում են միջոցներ ջրի որակը հիգիենիկ պահանջներին համապատասխանեցնելու համար, այդ մասին տեղեկացնելով տվյալ տարածքի սպառողներին՝ բազմաբնակարան շենքերի մուտքերում, Հայփոստի, Հայխնայբանկի բաժանմունքներում, այլ մարդաշատ վայրերում տպագիր նյութեր փակցնելու, իսկ թաղապետարաններին և համատիրություններին՝ հեռախոսագրերի միջոցով.

-համակարգում վթարների, պլանային և հրատապ աշխատանքների իրականացման հետևանքով ջրազրկումների, ինչպես նաև ջրի որակը ներկայացվող հիգիենիկ պահանջներին չհամապատասխանելու մասին համաքաղաքային, համայնքային կամ այլ զանգվածային ոչ տեղական նշանակության տեղեկատվությունը ՋԼՍ-ներով տարածվում է Երևանի «Ջրնուղ-կոյուղի» ՓԲԸ-ի մամուլի գրասենյակի կողմից ընկերության գլխավոր տնօրենի, արտադրատեխնիկական և զարգացման հարցերով

տնօրենի կամ այլ լիազորված անձանց ցուցումով: (պատ. մասնաճյուղերի տնօրեններ, գլխավոր ճարտարագետներ):

-մասնաճյուղերի սպասարկման տարածքում ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2004թ. ապրիլի 30-ի N43-Ն որոշմամբ հաստատված «նվազգույն» պահանջների շրջ կետի՝ ամենօրյա ժամը 7.00-ից մինչև 24.00 ընկած ժամանակահատվածում 4-ժամյա ջրամատակարարման ապահովման նպատակով պարբերաբար կատարել խրոնիկ անբավարար ջրամատակարարում ունեցող հատվածներում և բազմաբնակարան շենքերի մուտքագծերում ճնշումների չափագրումներ և անբավարար ճնշման դեպքում բացահայտել պատճառները և այն վերացնել (պատ. մասնաճյուղերի տնօրեններ, գլխավոր ճարտարագետներ):

2006թ-ի մայիսի 1-ից մինչև հունիսի 15-ը կատարել մասնաճյուղի սպասարկման տարածքի ամառային ամիսներին անբավարար ջրամատակարարում ունեցող բազմաբնակարան շենքերի վերին հարկերի ջրամատակարարման ուսումնասիրություններ և առաջարկ ներկայացնել բակային պոմպերի վերագործարկման և սահմանված կարգով շահագործման համար (պատ. մասնաճյուղերի տնօրեններ):

3.Ջրամատակարարման կենտրոնացված համակարգի ջրի որակի վերահսկման գործառույթներում տեղ գտած թերությունների վերացման միջոցառումներ

-ի թիվս ընկերության կառուցվածքային ստորաբաժանումների և կենտրոնական ապարատի ֆունկցիոնալ բաժինների ընկերության խորհրդի հաստատմանը ներկայացվող կանոնակարգերի, ներկայացնել հաստատման ընկերության «խմելու ջրի որակի հսկողության լաբորատորիայի» կանոնակարգը, որով սահմանված գործառույթներով նախատեսված են համագործակցությունը ՀՀ ԱՆ պետական հիգիենիկ և հակահամաճարակային տեսչության, ԵԶԿ ՓԲԸ մասնաճյուղերի և բնակչության հետ և իր ֆունկցիաներին համապատասխան խմելու ջրի որակ վերահսկման այլ աշխատանքների իրականացումը (պատ. ԵԶԿ ՓԲԸ աշխատակազմի ղեկավար):

-մատակարարվող խմելու ջրի որակի միջոցառումների իրականացումը ապահովող, ԵԶԿ ՓԲԸ կենտրոնական տեղեկատվական ծառայությանը ներկայացվող տվյալների և հաղորդագրումների կանոնակարգման մասին ԵԶԿ ՓԲԸ 31.10.2005թ. N136 հրամանի պահանջների կատարում և վերահսկում (պատ. մասնաճյուղերի տնօրեններ, գլխավոր ճարտարագետներ, խմելու ջրի որակի վերահսկման լաբորատորիա):

4.Բաժանորդներից ստացվող դիմումների և հիմնարկ-ձեռնարկություններից ստացվող գրությունների գրանցամատյանների վարման և դիմումներին, գրություններին արձագանքման գործում տեղ գտած թերությունների վերացման միջոցառումներ

-ընկերության կենտրոնական գրասենյակի ծառայությունների ղեկավարները և մասնաճյուղերի տնօրենները սպառողներից, ինչպես նաև

պետական, հասարակական և այլ կազմակերպություններից ու ձեռնարկություններից ստացվող դիմումներին և գրություններին, պահանջի պարագայում, պատասխանում են պարտադիր և օրենսդրությամբ սահմանված կարգով:

-բաժանորդներից ստացված դիմումների, պետական, հասարակական և այլ կազմակերպություններից ու ձեռնարկություններից ստացված նամակների գրանցամատյանների վարման և գրառումների միասնականության (միատիպության) ապահովման նպատակով գրառումները կատարել ըստ հետևյալ հերթականության

- ա. հերթական համարը ըստ կարգի
- բ. ստացման ամսաթիվը
- գ. դիմողի ազգանունը, անունը, հասցեն, կազմակերպության կամ հիմնարկի անվանումը
- դ. կազմակերպությունից կամ հիմնարկից ստացված գրության համարը և առաքման ամսաթիվը
- ե. առաջարկության, դիմումի, բողոքի, գրության համառոտ բովանդակությունը
- զ. ում և երբ է ուղարկվել կատարման և կատարման ժամկետը
- է. պատասխանի առաքման թվադրումը(ըստ ելից մատյանի)
- ը. պատասխանի համառոտ բովանդակությունը
- թ. գործի համարը ըստ անվանակարգի մասին»



ՆՐԱՄԱՆ

«31.10.2005թ.»

Տ.

Երևանի «Զրմուղ-կոյուղի» ՓԲԸ-ի մասնաճյուղերի կողմից
կենտրոնական տեղեկատվական ծառայությանը ներկայացվող օպերատիվ
տվյալների և հաղորդումների կանոնակարգման մասին

Երևանի «Զրմուղ-կոյուղի» փակ բաժնեպիրական ընկերության մասնաճյուղերի
կողմից կենտրոնական տեղեկատվական ծառայությանն ու խմելու ջրի
լաբորատորիային ներկայացվող օպերատիվ տվյալների գրանցման,
մասնաճյուղերի և բնակչության հետ հեռադարձ կապի կանոնակարգման
նպատակով.

ՆՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ.

1. Երևանի «Զրմուղ-կոյուղի» ՓԲԸ-ի խմելու ջրի որակի լաբորատորիայի վարիչ Ս.Ասատրյանին՝

- 1.1 ԵԶԿ ՓԲԸ-ի մասնաճյուղերի սպասարկման տարածքներում
մատակարարված խմելու ջրի որակի վերահսկողության նպատակով
կատարվող ամենօրյա հեռագրությունների արդյունքները
արձանագրել սույն հրամանին կից ներկայացված ձևերի համաձայն,
- 1.2 ԵԶԿ ՓԲԸ-ի կենտրոնական տեղեկատվական ծառայությանը
ներկայացնել կատարված հեռագրությունների արդյունքում
արձանագրված խմելու ջրի N2-III-Ա2-1 սանիտարական նորմերից և
կանոններից շեղումների դեպքերը,
 - 1.2.1 օրվա կարգավորիչ ջրամբարների ամենօրյա ստուգումների
օպերատիվ տվյալներում (Ձև-1), շեղումներ գրանցելու դեպքում
անմիջապես հայտնել կենտրոնական տեղեկատվական ծառայության
ղեկավարին և «Զրառ և տեխնիկական կենտրոնացված սպասարկում»
մասնաճյուղի տնօրենին,
 - 1.2.2 ջրամատակարարման բաշխիչ ցանցի սահմանված կետերից
վերցված նմուշների հեռագրությունների արդյունքներում (Ձև-2),
շեղումներ գրանցելու դեպքում անմիջապես հայտնել մասնաճյուղի
ղեկավարությանը և ԵԶԿ ՓԲԸ-ի շահագործման գծով փոխտնօրենին,

1.2.3 մասնաճյուղերի կողմից վերականգնված վթարներից հետո կատարված հետազոտությունների արդյունքներում (Ձև-3), շեղումներ գրանցելու դեպքում անմիջապես հայտնել մասնաճյուղի ղեկավարությանը և ԵՋԿ ՓԲԸ-ի շահագործման գծով փոխսրբենին,

1.2.4 հետազոտությունների անբավարար արդյունքներ ստանալու դեպքում կից ձևերում կատարել առանձին նշումներ և գրանցել ձեռնարկված միջոցները:

1.3 պարբերաբար ընտրողական սպուգումներ անցկացնել օրվա կարգավորիչ ջրամբարներում, սակայն պարտադիր սպուգայցեր կազմակերպել բոլոր ջրամբարներում եռամսյակը մեկ ներքոհիշյալ կետերի վերահսկողության նպատակով.

1.3.1 մնացորդային քլորի քանակի ճշգրիտ չափումների իրականացումը,

1.3.2 մնացորդային քլորի չափիչ սարքերի անխափան աշխատանքը,

1.3.3 անհրաժեշտ քիմիկատների առկայությունն ու օգտագործման ժամկետները,

1.3.4 ջրամբարներում գրանցամատյանների վարումը համաձայն ընթացակարգի,

1.3.5 վերոհիշյալ կետերի սպուգման ամփոփված արդյունքները ներկայացնել ԵՋԿ ՓԲԸ-ի շահագործման գծով փոխսրբենին:

1.4 «Ջրառ և կենտրոնացված տեխնիկական սպասարկում» մասնաճյուղին ներկայացնել ջրաղբյուրներում քլորի տրման սահմանված չափաքանակները եռամսյակը մեկ:

2. «Ջրառ և կենտրոնացված տեխնիկական սպասարկում» մասնաճյուղի տնօրեն Ռ. Նազարյանին՝

2.1 ապահովել ներքոհիշյալ օպերատիվ փվյալների տրամադրումը ԵՋԿԸ կենտրոնական տեղեկատվական ծառայությանը սահմանված կարգի համաձայն

2.1.1 երկու ժամը մեկ հայտնել ինքնահոս ջրաղբյուրներում և պոմպակայաններում տեղադրված ծախսաչափերի ցուցմունքները

2.1.2 երկու ժամը մեկ հայտնել ինքնահոս ջրաղբյուրներում և պոմպակայաններում քլորատրման չափաքանակները

2.1.3 ծախսված էլեկտրաէներգիայի փվյալները օրը մեկ անգամ (ժամը 12.00):

3. Երևանի «Ջրնուդ-կոյուղի» ՓԲԸ-ի մասնաճյուղերի փնտրեմունքներին`

- 3.1 բաժանորդներին մաքակարարվող խմելու ջրի որակի հսկողության նպատակով ապահովել օրվա կարգավորիչ ջրամբարների օպերատիվ փոխարինների փրամադրումը մասնաճյուղերի դիսպետչերական ծառայությանը երկու ժամը մեկ, վարելով համապատասխան գրանցամատյան (Ձև-4),
- 3.2 ապահովել ԵՋԿԸ կենտրոնական տեղեկարվական ծառայությանը մասնաճյուղի կողմից սպասարկվող համակարգի վերաբերյալ օպերատիվ ամենօրյա փոխարինների փրամադրումը, վարելով համապատասխան գրանցամատյանները ըստ կից ներկայացված ձևերի.
- 3.2.1 խմելու ջրի որակի մասին օպերատիվ փոխարիններ (Ձև-5),
- 3.2.2 ջրամաքակարարման բաշխիչ ցանցի վթարներ (Ձև-6),
- 3.2.3 կոյուղու ցանցի վթարներ (Ձև-7),
- 3.2.4 հեղեղաքար ցանցի վթարներ (Ձև-8),
- 3.2.5 բակային պոմպերի վթարներ (Ձև-9),
- 3.2.6 բնակչության բողոքների և ահազանգերի վերաբերյալ տեղեկարվություն (Ձև-10):

4. Երևանի «Ջրնուդ-կոյուղի» ՓԲԸ-ի մաքակարարման բաժնի պեյք` Վ.Թումասյանին`

- 4.1.1 Կազմակերպել ներկայացված ձևերի գրանցամատյանների ձեռք բերման և բաշխման գործընթացը:

5. Երևանի «Ջրնուդ-կոյուղի» ՓԲԸ-ի կենտրոնական տեղեկարվական ծառայության պեյք Ֆ. Նարությունյանին`

- 5.1 պարբերաբար, սակայն ոչ պակաս ամիսը մեկ անգամ կարարել ստուգումներ մասնաճյուղերի դիսպետչերական ծառայություններում գրանցամատյանների պարզաճ վարման և օպերատիվ փոխարինների ամբողջական հաղորդումների մասով,
- 5.2 կարարված ստուգումների ամփոփված արդյունքները ներկայացնել ԵՋԿ ՓԲԸ-ի շահագործման գծով փոխարնորենին:

6. Նրամանի կապարման հսկողության պապասխանավորությունը դնել մասնաճյուղերի փնտրենների, ԵՋԿ ՓԲԸ-ի կենտրոնական տեղեկավարական ծառայության պեպ Ֆ.Նարությունյանի և խմելու ջրի լաբորատորիայի վարիչ Ս.Ասաբոյանի վրա:

7. Նրամանի վերահսկողությունը դնել Երևանի «Ջրմուղ-կոյուղի» ՓԲԸ-ի շահագործման գծով փոխփնտրեն Ռ.Վուլքինգի վրա:


Սույն հրամանին կից ներկայացվում է Երևանի «Ջրմուղ-կոյուղի» ՓԲԸ վերոհիշյալ գրանցամատյանների վարման ձևերը 6 էջ:

Գլխավոր փնտրեն՝

Գ.Ալեքսանյան



ԵԶԿԸ ՕՊԵՐԱՏԻՎ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՆԱԳՈՐԴՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՍԻՏԵՄԱ





ՄԱՍՆԱՃՅՈՒՂԵՐԻ ԴԻՄՊԵՏՆԵՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆ

Ձև-6 Զրամարակարարման բաշխիչ գանգի վթարներ

№	Վթարի գրանցման ամսաթիվը	Վթարի հասցեն	Վերացման ժամկետ		Քանդված ասֆալտ (մ2)	Կատարված աշխատանքի համառոտ նկարագրություն	Նեոախտակապ ԵԶԿԸ կենտրոնական փողակալական ծառայության հետ		Զրագրկման դեպքում հաղորդվել է ԵԶԿԸ խմելու ջրի լաբորատորիա
			Աշխատանքի սկիզբ (ամսաթիվ, ժամ)	Աշխատանքի ավարտ (ամսաթիվ, ժամ)			Նաղորդեց (անուն, ազգանուն)	Ընդունեց (անուն, ազգանուն)	Ընդունեց (անուն, ազգանուն)

Ներթափոխը հանձնեց պատասխանաբար -----
(անուն, ազգանուն)



ՄԱՍՆԱՃՅՈՒՂԵՐԻ ԴԻՄՊԵՏՆԵՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆ

Ձև-7 Կոյուղու ցանցի վթարներ

№	Վթարի գրանցման ամսաթիվը	Վթարի հասցեն	Վերացման ժամկետ		Քանդված ասֆալտ (մ ²)	Կատարված աշխատանքի համառոտ նկարագրություն	Նեոախոսակապ ԵԶԿԸ կենտրոնական փեղեկարվական ծառայության հետ	
			Աշխատանքի սկիզբ (ամսաթիվ, ժամ)	Աշխատանքի ավարտ (ամսաթիվ, ժամ)			Նաղորդեց (անուն, ազգանուն)	Ընդունեց (անուն, ազգանուն)

Ներթափոխը հանձնեց պարասխանաբու
(անուն, ազգանուն)



ՄԱՍՆԱՃՅՈՒՂԵՐԻ ԴԻՄՊԵՏՆԵՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆ

Ձև-8 Նեղեղաբար ցանցի վթարներ

№	Վթարի գրանցման ամսաթիվը	Վթարի հասցեն	Վերացման ժամկետ		Քանդված ասֆալտ (մ ²)	Կատարված աշխատանքի համառոտ նկարագրություն	Նեռախոսակապ ԵԶԿԸ կենտրոնական տեղեկավարվական ծառայության հետ	
			Աշխատանքի սկիզբ (ամսաթիվ, ժամ)	Աշխատանքի ավարտ (ամսաթիվ, ժամ)			Նաղորդեց (անուն, ազգանուն)	Ընդունեց (անուն, ազգանուն)

Ներթափոխը հանձնեց պարասխանաբուր
(անուն, ազգանուն)



ՄԱՍՆԱՃՅՈՒՂԵՐԻ ԴԻՄՊԵՏՆԵՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԳՐԱՆՅԱՄԱՏՅԱՆ

Ձև-9 Բակային պոմպերի վթարներ

№	Վթարի գրանցման ամսաթիվը	Վթարի հասցեն	Վերացման ժամկետ		Կատարված աշխատանքի համառոտ նկարագրություն	Նեոսիտոսակապ ԵԶԿԸ կենտրոնական տեղեկարկական ծառայության հետ		Ջրագրկման դեպքում հաղորդվել է ԵԶԿԸ խմելու ջրի լաբորատորիա	
			Աշխատանքի սկիզբ (ամսաթիվ, ժամ)	Աշխատանքի ավարտ (ամսաթիվ, ժամ)		Նաղորդեց (անուն, ազգանուն)	Ընդունեց (անուն, ազգանուն)	Ընդունեց (անուն, ազգանուն)	

Ներթափոխը հանձնեց պատասխանաբար -----
(անուն, ազգանուն)



ՄԱՍՆԱՃՅՈՒՂԵՐԻ ԴԻՄՊԵՏՆԵՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆ

Ձև-10 Բնակչությունից ստացված ահազանգերի վերաբերյալ տեղեկատվություն

№	Ահազանգի գրանցման ամսաթիվը, ժամը	Նասցեն, հեռախոսի համարը	Ստացված բողոքի համառոտ բովանդակություն	Ձեռնարկված միջոցառումներ	Նեռախոսակապ ԵԶԿԸ կենտրոնական տեղեկատվական ծառայության հետ		Նեռախոսակապ ԵԶԿԸ խմելու լաբորատորիայի հետ (ջրի որակի հետ կապված բողոքի դեպքում)	Ներադարձ կապ բնակչի հետ
					Նաղորդեց (անուն, ազգանուն)	Ընդունեց (անուն, ազգանուն)		

Ներթափոխը հանձնեց պարասխանաբու -----
(անուն, ազգանուն)